13. Գորտնուկ, 14. Գռեկան, 15. Դասոնք, 16. Եղան լեզու, 17. Եղիճ, 18. Երեքնուկ, 19. Թանթրվենի, 20. Իշկաթնուկ, 21. Լեզվըռճուկ, 22. Լոշտակ, 23. Լվի խոտ, 24. Խոլորս, 25. Խոշրուկ, 26. Խոնդատ, 27. Խռովխոտ, 28. Խտուտ, 29. Ծնեբեկ, 30. Կառ, 31. Կտքվեղիկ, 32. Կրծկծուկ, 33. Կուպղ, 34. Կորնգան, 35. Կորնգնուկ, 36. Կորնկուջղա, 37. Հաջիրաշ, 38. Հավածոր, 39. Հոսին, 40. Ջիագոզիկ, 41. Ջկընխոտ, 42. Ճլճլուկ, 43. Ճոմել, 44. Ճնճղու հինա, 45. Մամուռ, 46. Մատուտակ, 47. Մարոխ, 48. Մեղրածուծք, 49. Մկնփուշ, 50. Մորեմուկ, 51. Շան սխտորուկ, 52. Շերեփուկ, 53. Շոնդեռ, 54. Ջլլլուկ, 55. Պոչով փարչիկ, 56. Պոչուկ, 57. Սանամաքի, 58. Սեզ, 59. Սև սոնիճ, 60. Սղանգ, 61. Սպանդ(ջ), 62. Վարժոխ. 63. Տատաշ, 64. Տորնուկ, 65. Տուղտ, 66. Ցորնուկ, 67. Փալախ խոտ, 68. Փսիկ, 69. Քապանակ, 70. Քարագործ, 71. Քոսա խոտ, 72. Օձու լեզու, 73. Օշինդր։

Դ. ԾԱՌԵՐ

1. Ալաժարի, 2. Ալուճի, 3. Բարտի, 4. Բոծեխի, 5. Դառնջի, 6. Եղրդի, 7. Ընկուլզի, 8. Թեղի, 9. Թղկի, 10. Խնձորի. 11. Կաղամախի, 12. Կաղնի, 13. Կանտոնի, 14. Կեչի, 15. Հացի, 16. Մամոխի, 17. Մասրենի, 18. Մոշի, 19. Նորգենի, 20. Շաքրենի, 21. Շլորի, 22. Ուռենի, 23. Պնդուկի, 24. Տանձի, 25. Փշատի, 26. Քարշնի։

Ե. ԹՌՉՈՒՆՆԵՐ

1. Ագռավ, 2. Անգղ, 3. Աղավնի, 4. Աղզիխշո, 5. Անձեղ, 6. Արծիվ, 7. Արտուտ, 8. Արոս, 9. Բազ (վայրի), 10. Բազե, 11. Բլբուլ, 12. Գիլհավք (արծվի գիշատիչ տեսակը), 13. Գլիր-գլիր, 14. Դեղձանիկ, 15. Զողուռ, 16. Լակլակ, 17. Լոր, 18. Լորամարգի, 19. Միծառ, 20. Կաքավ, 21. Կիվիվ, 22. Կկու, 23. Կունդո (բու), 24. Կոռ-կոռ, 25. Կռունկ, 26. Ջկնկուլ, 27. Ղազ (վայրի սագ), 28. Ճարեկ, 29. Ճիռկաքավ, 30. Ճրնճուղ (Ապռնեկ), 31. Ճշնարոս, 32. Ճուլոր, 33. Մանկըռթևիկ, 34. Շահե (բազեի մի տեսակը), 35. Ուրուր, 36. Պուպու (հոպոպ), 37. Ջրխոթան, 38. Ջրկռունկ, 39. Սարեկ, 40. Սրորիկ, 41. Տատրակ, 42. Տիռլիլի, 43. Ցախսարեկ, 44. Ցուրուր (ուրուր), 45. Օրոր։

Զ. ԱՅԼԵՎԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

1. Աղվես, 2. Այծյամ, 3. Արջ, 4. Աքիս, 5. Գել, 6. Գիշերահավիկ (չղջիկ), 7. Եղնիկ, 8. Էրե, 9. Լապսարակ, 10. Լորտու, 11. Խաչափառ, 12. Խլուրդ, 13. Կարիճ, 14. Կինճ, 15. Կոտկիրիրա, 16. Կուղ, 17. Ջմուկ, 18. Ճագար, 19. Մարդագել, 20. Մողոզիկ, 21. Մուկ, 22. Ջրշուն (կուղբ), 23. Սկյուռ, 24. Վագր, 25. Վայրի կատու, 26. Վայրի ոչխար, 27. Փորսող, 28. Քարթաթոշ (դոդոշ), 29. Օձնի (ոզնի), 30. Օձ։

Է. ՄԻՋԱՏՆԵՐ

1. Ականջմտուկ (սողսողիկ), 2. Բոռեղ, 3. Գենա, 4. Դզեզ, 5. Ջատկի բոլոճ, 6. Թսթան բոլոճ, 7. Լու, 8. Կիտուռ, 9. Ջիթորկ, 10. Ճանճ, 11. Մժիկ, 12. Մլիկ, 13. Մեզոն, 14. Շնաճանճ, 15. Ոջիլ, 16. Ոսկի դզեզ, 17. Պապուկ, 18. Սարանդոստիկ (սարդ), 19. Տիզ։

ՄՇՈ ԱՇԽԱՐՀԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐ

Բազմաթիվ են այն բույսերը, որոնց բուժիչ հատկության հետ ժողովուրդն անհիշատակ ժամանակներից ի վեր ծանոթ է։ Այդ ծանոթությունը, մեր կարծիքով, երկու ճանապարհով է ձեռք բերված, կամ ինքնաբերաբար, փորձերով, կամ նախնի հեքիմների ու բժիշկների միջոցով սովորած։

Մշո աշխարհի (Բուլանըխի շրջան) ամենից շատ ծանոթ և ընդարձակ ծավալով գործածության մեջ են գտնվել հետևյալ բույսերը, որոնք դեղիչ հատկություն ունեն։

1. ԱՂԲՐԱՆՑ ԱՐՈՒՆ (Anoplantus)

Թունդ կարմիր, թավշանման և գրավիչ գեղեցկություն ունեցող ծաղիկ է։ Սրա թերթիկները չորացնում, փոշիացնում և, իբրև ծարիր, աչքերն են քաշում։ Կանայք հավատացնում են, որ դատ առողջարար է աչքերի համար։

2. ԱՐԹՈՒԻԿ

Այս անունը չգիտենք հայերե՞ն է, թե՞ այլազգի բառ։ Բառարաններում չկարողացանք գտնել։ Ալիշանի «Հայբուսակ»-ում հիշատակված է իբրև բազմամյա բույս։ Սրա արմատը սաստիկ այրող հատկություն ունի,

ծեծում են և յուղի հետ խառնելով քսում քոսի վերքերին։ Արդյունքը շատ հաջող է։

3. ՐԱՑՎԵՆԻԿ ԿԱՄ ԳՈՐՏՆՈՒԿԻ ԾԱՂԻԿ
(Achillae mille folium)

Վիրախոտ է։ Տերևները չորացնելով փոշիացնում և ցանում են անասունների վերքերի վրա չորացնելու համար։

4. ԲՈՂ ԿԱՄ ՍԱՐԻ ԲՈՂ

Ունի մսուտ ու հաստ ցողուններ, խաշելով ու թթվեցնելով ուտվում է։ Արմատը տալիս է մի տեսակ կաթնանման հյութ, որից պատրաստում են խայծղան կամ ղաթրան, որ ժողովրդական բարբառով կոչվում է բոխիճ. ունի ծանր հոտ և ճճեհալած հատկություն։ Գործածվում է անասունների վերքերի համար։

5. ԳԱՂՏԻԿՈՒՌ
(Muvsurus minimus)

Գաղտիկուռը ծեծում, ջուրը մղում և խմում են փորացավի կամ աղիքների հիվանդության պարագային։

6. ԵԶԱՆ ԼԵԶՈՒ
(Planto gomedia)

Բուսնում է առուների եզերքներում և դաշտերում։ Կապում են վերքի վրա։ Թարախ ծծելու և վերքը մաքրելու հատկություն ունի։

7. ՍՂԱՆԳ
(Rhizoma Asari)

Բազմամյա բույս է. արմատն ունի ծանր հոտ, որ սաստիկ փոշտացնող է։ Գործածվում է անասունների վերքերի համար. ճճեհալած է և մսաբեր։

8. ՍՊԱՆԴ ԿԱՄ ՍՊԱՆՋ
(Peganum)

Սրա հունդն առնելով եփում և ջուրը գործածում են աչքացավի դեմ՝ բորբոքման դեպքում։

9. ԼՈՇՏԱԿ
(Bryonia dionica)

Այս բույսը կոչվում է նաև մարգատակ։ Տեսնենք թե ի՛նչ է ասում բառարանը այդ խորհրդավոր բույս-արմատի մասին։ Լոշտակ՝ Հայաստանի մեջ արմատ մըն է աղի կերպարանքով (Հայկազեան առձեռն բառարան)։ Հենց այդ «տղի կերպարանքով» լինելու հանգամանքն է, որ ժողովրդի մեջ առաջացել է սնոտի հավատք դեպի այդ բույսը։ Այժմ էլ ժողովուրդը հավատում է, թե այդ բույսի արմատը իսկ և իսկ մարդու է նման, թե նրա արմատները կտրելիս ձայն է արձակում, և թե արձակած ճիչը եթե մարդու ականջն ընկնի՝ իսկույն կմահանա։ Այդ սնոտիապաշտությունն անշուշտ առաջ է եկել նախնի բժիշկների խաբեբայությունից, որպեսզի միայն իրենք կարողանան ձեռք բերել և շահագործել տգետներին։

Լոշտակը բազմամյա բուժիչ բույս է, ունի ձմերուկի նման երկար ցողուն և տերև, արմատը դեղնավուն է և քինաքինայի (խինու) չափ դառն է։ Օգտավետ է աղիքների հիվանդության դեպքում։

10. ԽԱՎԸՐԾԻԼ
(Reum Ribes)

Նշանավոր է իր գալար, մսալի ցողունով և լիմոնի նման, բայց ավելի հաճելի թթվաշ հյութով ու համով։ Տերևները կոչվում են գաբ։ Խավըրծիլը բազմամյա բույս է, ունի հաստ ու խորը գնացած արմատներ, որոնք լոշտակի նման դառն են և գործածվում են աղիքների հիվանդության դեպքում։

11. ԽՈՌՈՎԽՈՏ

Ժողովուրդն աչքերի, ինչպես և ամեն տեսակ վերքի բորբոքումն անվանում է խռովիլ, որից և այս բույսը—խռովխոտ, որ այրում և աչքերը ծխի դեմն են տալիս, բորբոքումն հանգստացնելու համար։

12. ԽՏՈՒՏ
(Leontadon baraxacum)

Մասնավորապես այս բույսի վրա կանդ ենք առնում և հայ բժիշկների ուշադրությունը հրավիրում այս բույսի բուժիչ հատկության և ժողովրդի՝ դրանից օգտվելու կերպի վրա։ Բուլանըխում երբ աչքի կապիչները կամ բարբառով՝ կոպերը արնակալում և հաստանում են, հեքիմ կանայք դիմում են խտուտի արմատից հոսող կաթնանման նյութի օգնության։ Հետներն առնում են մի փարչ ջուր, բույսի արմատի շուրջը փորում, փոսացնում են, ջուրն ածում փոսի մեջ և սպասում այնքան ժամանակ, որ ջուրն ամբողջովին ծծվի առատ հյութ արտագրելու համար։ Ապա զգուշությամբ սուր դանակով արմատը կտրում են և հոսող հյութն անմիջապես առնում մի կտոր կարագի վրա և

աչքի կոպերը շրջելով քսում արնակալած տեղերը։ Արդյունքն հրաշալի է. արյունը կտրվելով, ինչպես ժողովուրդն է ասում, արտասուք է հոսում, աչքը հանգստանում և հիվանդությունն անցնում է։

Ավելին, հայտնի է, որ Արևելքի ժողովուրդները ինչքան են սիրում ծարիր գործածել, դա աչքերը և ընդհանրապես գեղեցիկ երևալու միջոցներից մեկն է։ Նույնիսկ մահմեդական տղամարդիկ՝ ցեղապետները, շեյխերը ծարիր են գործածում, և այդ, ըստ նրանց կրոնական ըմբռնման, օրինավորություն է։ Ծարիրի շնորհիվ աչքերը մարմրուն և հրապուրիչ են դառնում։ Հին ասորիները և հրեաները նույնպես գործածում էին ծարիր. հրեաների պատմությունից հայտնի է, որ Հուդիթը՝ աչքերը ծարիր դրավ և մտնելով Օլեփեռնիսի վրանը՝ սրախողխող արավ բռնակալին։ Արդյոք նախնի հայերն ևս այդ սովորությունն ունեի՞ն, կարծում եմ՝ այո՛, քանի որ ունենք ծարիր բառը և ներկայիս էլ դրա գործածությունը։

Այսպես՝ վերը հիշված ձևով հավաքած խտուտի հյութը դնում են հոտաց, այսինքն՝ թողնում այնքան, որ խմորում առաջ դա, ապա հալում, լցնում են ճրագի մեջ, պատրույգը վառում, մուրը հավաքում և իբրև ծարիր գործածում են թե՛ իբրև դեղ, թե՛ իբրև պչրանք։

Կարծում եմ (որովհետև բժիշկ չեմ) աչքի կոպերի հաստանալը, արնակալելը պետք է որ տրախուման հիվանդությունը լինի, որի գեղն ինքը ժողովուրդը գտել և գործածում է։ Թող հայ ձեռնահաս բժիշկները փորձեն և գիտականորեն կիրարկեն, գուցե ցանկալի հետևանքների հասնեն։ Խտուտ կարելի է գտնել Հայաստանի բոլոր շրջաններում և ծանոթ է ժողովրդին։

Ես, օրինակ, խտուտ տեսել եմ Լենինականի շրջակայքում։

ՇԱՐ[1]
ՄՇՈ ԴԱՇՏԻ ԵՎ ԲՈՒԼԱՆԸԽԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ

Արբլբուհար[2]	Բլուր	Խաչլու
Ալադին	Բնդրխներ	Խասդեղ
Ալիգլփուն	Բոստաքենդ	Խարաբշար[5]
Ալիգրոնան	Գիրոլան	Խարաղբլ
Ալիզուլում	Գոմեր	Խարղոս
Ալիջան	Գոմս	Խարս[6]
Աշտիշատ[3]	Դվնիկ	Խեյպիան
Առինջ	Դրմեդ	Խզբլաղաճ
Առինջվանք	Եկմալ	Խոշգելդի
Առնջիկ	Երիղակ	Խորոնք
Աստղո՞նք	Զիարեթ	Խուփեր
Ավղաղբուր	Թաթարխաղի	Ծխավու
Ավղուա	Թեղուտ	Ծղակ
Բաղու	Թիլ	Ծոգետ
Բաղլու[4]	Թունդրակ	Կառնեն
Բդլից	Լաթար	Կողակ
Բերդակ	Լիզ	Կուփ
Բլելեր	Խաշխալդաղ	Կուրավու

[1] Բանահավաքի շարը (շարքը) լրիվ չէ, մանավանդ որ կազմված է հիշողությամբ։ Շարից դուրս մնացածները, ենթադրում ենք, այն աննշան գյուղերն են, որոնք բաղկացած էին մի քանի անից (Ծ. Կ.)։

[2] Գյուղացիների գավառիկ հնչմունքը պահպանված է։

[3] Մշո դաշտի, ինչպես և Բուլանըխի (վերին և ներքին) գյուղերի ճնշող մեծամասնությունը հայկական անուն էր կրում։ Թուրքերի և քրդերի ներխուժումից հետո, որոշ գյուղեր կնքվել են թուրքական կամ քրդական անուններով։

[4] Պատմական անունը՝ Պարեխ (ենթադրական) (Ծ. Կ.)։

[5] Պատմական անունը՝ Հայկաշեն։

[6] Պատմական անունը՝ Խարձ (Ծ. Բ.)։